

**Հարց Ի՞նչ է գովազդը:**

**Պատասխան** Տարբեր տեսակի տեղեկատվական միջոցների օգնությամբ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն անորոշ թվով անձանց շրջանում, որը կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական ու իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:

**Հարց Ո՞րն է հակագովազդը:**

**Պատասխան** Հակագովազդը գովազդի տեսակ է, որը տրվում է անբարեխիղճ գովազդի հետևանքով սպառողի մոտ առաջացած սխալ պատկերացումների վերացման նպատակով՝ անբարեխիղճ գովազդի հերքման և իրական փաստերի վերականգնման միջոցով:

**Հարց Ո՞րն է կանխամտածված կեղծ գովազդը:**

**Պատասխան** Կանխամտածված կեղծ գովազդը անբարեխիղճ գովազդի ձև է, որի միջոցով գովազդատուն, գովազդ արտադրողը, գովազդակիրը կանխամտածված կերպով մոլորեցնում են գովազդ սպառողներին: